ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ք. Երևան «22» 05 2023թ N° 883 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի N 664-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետով՝

հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի օգոստոսի 10-ի «Ներդրումային ծրագրերին հավանություն տալու կարգը սահմանելու մասին» N 664-Լ հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Recoverable Signature

X

ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

Signed by: KEROBYAN VAHAN 1110760124

Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2023 թ. Հոկտեմբերի 22-ի N 883-Լ հրամանի

«Հավելված
ՀՀ էկոնոմիկայի նախարարի
2021 թ. օգոստոսի 10-ի N 664-Լ հրամանի

ԿԱՐԳ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է ներդրումային ծրագրերին հավանության տալու դեպքում գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրումը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի:
2. Օրենքով սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն անցած, ՎԻ ՋԻ ԷՍ-84 (WGS-84) ԱՐՄՐԵՖ 02 (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով հողամասի տեղակայումը հաստատված ներդրումային ծրագրի փաթեթը (այսուհետ՝ Ծրագիր) գնահատվում է ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) գյուղատնտեսական ծրագրերի նախագծման (այսուհետ՝ Իրավասու ստորաբաժանում), արդյունաբերության քաղաքականության և ներդրումային ծրագրերի վարչությունների (այսուհետ՝ մասնագիտական ստորաբաժանումներ) կողմից:
3. Մասնագիտական ստորաբաժանումները 3 աշխատանքային օրվա ընթացքում գնահատում են Ծրագիրը և «Mulberry2» փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով ներկայացնում է Իրավասու ստորաբաժանմանը:
4. Ծրագիրը, կախված առանձնահատկություններից, կարող է գնահատվել նաև Նախարարության առանձնացված և կառուցվածքային այլ ստորաբաժանումների կողմից:
5. Ծրագիրը գնահատվում է գնահատման ձևաթերթիկին համապատասխան (համաձայն Ձևի), յուրաքանչյուր չափանիշի համար կիրառելով 0-100 միավորների սանդղակ (ամբողջական թվերով):
6. Ծրագիրը գնահատվում է՝ ելնելով հետևյալ չափանիշներից.
   1) արտադրանքի/ծառայությունների ծավալ.
   2) աշխատատեղերի ստեղծում/պահպանում և/կամ որպես կրճատման հիմք նոր տեխնոլոգիաների կիրառում.

3) ներդրումների ծավալը, ներառյալ՝ հիմնական միջոցները.
4) պետական և համայնքային բյուջե վճարվելիք կանխատեսվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն.
5) փոփոխման ներկայացված հողամասի մակերեսի վերաբերյալ հիմնավորվածություն.
6) տնտեսական քաղաքականությանը համապատասխանություն.
7) իրատեսություն.
8) գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման հիմնավորվածություն:

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված գնահատման չափանիշները հանդիսանում են նաև Ծրագրին ներկայացվող պահանջներ, որոնք պետք է ներկայացված լինեն առնվազն երեք տարվա կտրվածքով՝ ըստ տարիների:
8. Գնահատման արդյունքում ձևավորվում է Ծրագրի վերջնական գնահատական՝ որպես բոլոր ութ չափանիշներին տրված գնահատականների միջին թվաբանական:
9. Ծրագիրը Նախարարության կողմից հավանության է արժանանում, եթե բավարարել է անցողիկ շեմը, որը 60 միավոր է (վերջնական միավորի կլորացումը դեպի վերև):
10. Իրավասու ստորաբաժանումը ամփոփում է գնահատման արդյունքները և անցողիկ շեմը բավարարող Ծրագրի դեպքում ներկայացնում է դրական կարծիք՝ գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման վերաբերյալ: Ծրագիրը անցողիկ շեմը չբավարարելու դեպքում տրվում է բացասական կարծիք:

Ծրագրի գնահատման ձևաթերթիկ

N	Չափանիշ	Գնահատական			
		Գյուղատնտեսական ծրագրերի նախագծման վարչություն	Արդյունաբերության քաղաքականության վարչություն	Ներդրումային ծրագրերի վարչություն	Միավորների սանդղակ (ամբողջական թվերով)
1.	Արտադրանքի/ծառայությունների ծավալ				0-100
2.	Աշխատատեղերի ստեղծում/պահպանում և/կամ որպես կրճատման հիմք նոր տեխնոլոգիաների կիրառում				0-100
3.	Ներդրումների ծավալը, ներառյալ՝ հիմնական միջոցները				0-100
4.	Պետական և համայնքային բյուջե վճարվելիք կանխատեսվող գումարների վերաբերյալ տեղեկատվություն				0-100
5.	Փոփոխման ներկայացված հողամասի մակերեսի վերաբերյալ հիմնավորվածություն				0-100
6.	Տնտեսական քաղաքականությանը համապատասխանություն				0-100
7.	Իրատեսություն				0-100
8.	Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման հիմնավորվածություն				0-100
Չափանիշների գնահատականի միջին թվաբանականը՝ ըստ ստորաբաժանումների (1+2+3+4+5+6+7+8)/8		a	b	c	
Ստորաբաժանումների գնահատականների միջին թվաբանականը					d

(a+b+c)/3				

»: